

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ ԹԻՎ 1

2019 թվականի սեպտեմբերի 5-ին տեղի ունեցավ ՀՀ Կոտայքի մարզի Գեղաշենի Ռազմիկ Ստեփանյանի անվան միջնակարգ դպրոցի VIII^թ դասարանի ծնողական ժողովը: Ծնողական ժողովին ներկա էին բոլոր ծնողները: Այն վարում էր դասույթ Ար. Դավթյանը:

ՕՐԱԿԱՐԳՈՒՄ՝

1. Դասարանի ծնողական խորհրդի և խորհրդի նախագահի ընտրությունը:
2. Մովորողների պարտադիր կրթության իրականացման գործընթացում անհրաժեշտ ուսումնական նյութերի ձեռքբերման համար աշխատանքներ իրականացնելու հարցը:
3. Ընթացիկ հարցեր/կարգապահություն, հերթապահություն, ռեժիմ/:

1. Լսեցին. _ Դասարանի ծնողական խորհրդի և խորհրդի նախագահի ընտրության հարցը:

Ելույթ ունեցավ դասույթ Ար.Դավթյանը՝ ներկայացնելով ծնողական խորհրդի ընտրության կարգը:

Առաջարկվեց նոր ուսումնական տարվա համար ձևավորել VIII^թ դասարանի ծնողական խորհուրդ՝ նախագահ և չորս անդամ կազմով: Առաջարկվեց հինգ անդամների թեկնածություն.

1. Հարությունյան Աստղիկ
2. Գինոսյան Գոհար
3. Աբելյան Լուսինե
4. Ասատրյան Իսկուհի
5. Աբրահամյան Նունե

Նախագահի թեկնածու առաջադրվեց Աստղիկ Հարությունյանը, որից հետո կատարվեց քվեարկություն: Ծնողական խորհրդի նախագահ ընտրվեց Աստղիկ Հարությունյանը:

Որոշեցին.

VIII^թ դասարանում ձևավորել ծնողական խորհրդի հետևյալ կազմը.

1. Հարությունյան Աստղիկ/նախագահ/
2. Գինոսյան Գոհար
3. Աբելյան Լուսինե
4. Ասատրյան Իսկուհի
5. Աբրահամյան Նունե

2. Լսեցին.- Սովորողների պարտադիր կրթության իրականացման գործընթացում անհրաժեշտ ուսումնական նյութերի ձեռքբերման համար աշխատանքներ իրականացնելու հարցը:

Դասղեկ Ար.Դավթյանը նշեց, որ ծնողները մանկավարժական կոլեկտիվի հետ միասին պետք է փորձեն միասնական պահանջներ ձևավորել Էրեխաների դաստիարակության հիմնախնդիրների հարցում:

Դասղեկը հորդորեց ծնողներին աջակցել դպրոցին՝ պարտադիր կրթություն իրականացնելու, սովորողներին ուսուցման և դաստիարակության համար անհրաժեշտ պայմաններ ապահովելու համար: Ուսուցիչներին և դասղեկներին օգնել ձեռքբերել կրթության գործընթացի նորմալ կազմակերպման համար անհրաժեշտ տետրեր, օրագրեր, գրենական պիտույքներ, ժամանակին վճարել դասագրքերի վարձավճարները:

Որոշեցին. - Օգնել դասղեկին և ուսուցիչներին՝ ձեռքբերելու անհրաժեշտ տետրեր, օրագրեր, կազմակերպված իրականացնել դասագրքերի վարձավճարների հավաքագրումը:

3. Լսեցին.- Ընթացիկ հարցեր/կարգապահություն, հերթապահություն, ռեժիմ/:

Դասղեկ Ար.Դավթյանը նշեց, որ դասերը սկսվելու են 9⁰⁰-ին, ավարտվելու են 15⁰⁰-ին: Դասղեկը հորդորեց ծնողներին հետևողական լինել իրենց Էրեխաների նկատմամբ, հետևել, որ աշակերտները դպրոց հաճախեն ճիշտ ժամանակին, անհրաժեշտ պարագաներով/դասագիրք, օրագիր, տետր/, համազգեստով: Ենթարկվեն դպրոցի ներքին կարգապահական կանոններին և աշակերտավայել վարք դրսևորեն դպրոցում:

Որոշեցին. - Առավել ուշադիր և հետևողական լինել, որ աշակերտները դպրոց հաճախեն աշակերտավայել կեցվածքով, լինեն կարգապահ, դասերին պատրաստ:

Ծնողական խորհրդի նախագահ՝

Քարտուղար՝




/Աստղիկ Հարությունյան

/Լուսինե Աբելյան